

Բանկային (ընթացիկ) հաշիվների մասին տեղեկատվական ամփոփագիր

Բանկը՝ պայմաններով սահմանված կարգով և իր ներքին ակտերին համապատասխան, իրականացնում է հաշվի համալիր սպասարկումը և հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկա-դրամարկղային գործառնությունները, որոնք արգելված չեն ՀՀ օրենսդրությամբ: Բանկային հաշվով իրականացվող ուղղակի գործառնություններից են հաշվարկադրամարկղային գործառնությունները, մասնավորապես՝ դրամական միջոցների կանխիկ մուտք/ելքը, փոխանցումները, արտարժույթի փոխարկումները, ինչպես նաև Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ իրականացվող օրենքով չարգելված այլ գործառնություններ, բացառությամբ ոսկով առարկայազուրկ մետաղական հաշիվների, որոնցով իրականացվում են հետևյալ տեսակի գործառնությունները՝

1. Մետաղական հաշվին անկանխիկ ոսկու մուտքագրումն /համալրում/ իրականացվում է Բանկից անկանխիկ ոսկի գնելով կամ երրորդ անձանց/հաճախորդի այլ առարկայազուրկ մետաղական հաշվից անկանխիկ փոխանցման միջոցով: Մուտքագրումն իրականացվում է հաճախորդի կողմից հանձնարարական ներկայացնելու օրվա դրությամբ՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն:
2. Մետաղական հաշվից անկանխիկ ոսկու ելքագրումն իրականացվում է մետաղական հաշվում առկա ոսկին Բանկին վաճառելու միջոցով: Ելքագրումն իրականացվում է հաճախորդի այլ կամ երրորդ անձանց ոսկու հաշիվներին փոխանցում կատարելու կամ հանձնարարական ներկայացնելու օրվա դրությամբ՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն:
3. Ոսկու անկանխիկ առք և վաճառքն իրականացվում է հաճախորդի գործարքի Էական պայմաններ (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա,
4. Հաշվից անակցեպտ գանձումներն իրականացվում են ի կատարումն Բանկի կամ երրորդ անձանց նկատմամբ հաճախորդի պարտավորությունների:

Ամերիաբանկ ՓԲԸ-ում հաշիվ բացելու, ավանդի, վճարային քարտի և պահատուկի համար անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկություններին կարող եք ծանոթանալ այստեղ:

Բանկային հաշիվներով գործառնությունները կատարվում են բանկային հաշվի արժույթով, բացառությամբ միջոցների փոխարկման գործառնությունների: Փոխանակումը կատարվում է այդ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին:

Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին: Միաժամանակ 10 և ավելի կանխիկ մուտքի գործարք կատարելու դեպքում իրավաբանական անձանցից գանձվում է միջնորդավճար՝ 20 ՀՀ դրամ յուրաքանչյուր մուտքի համար:

Անկանխիկ արտարժույթի մուտքագրումը հաշվին կատարվում է անվճար: Զարտային հաշիվներին, ինչպես նաև ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար:

Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- ժամկետային ավանդներից գոյացած միջոցների, այդ թվում տոկոսագումարների դեպքում (բացառությամբ ժամկետից շուտ մարվող ավանդների),
- ինսայդական ավանդների տոկոսագումարների դեպքում,
- պարտատոմսերի գումարների այդ թվում արժեկտրոնի վճարման դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում:

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:

Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողությունները արտացոլող այդ նպատակով բացված հատուկ հաշվից ելքի դեպքում միջնորդավճար չի գանձվում:

Բանկային հաշվին անկանխիկ միջոցները մուտքագրվում են Բանկի թղթակից հաշվին գումարի մուտքագրման օրը: Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում են համաձայն ստորև սահմանված սակագների և ժամանակացույցի.

	Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ			
	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում
ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թողթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14.00-ից մինչև 15.15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարարականի համար:

2) Պայմանագրով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսներ վճարելու պայման սակագնով նախատեսված չէ: Սակագներով սահմանված լինելու դեպքում Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ: Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով կամ բանկային հաշվի արժույթով՝ ըստ հաճախորդի ցանկության: Արտարժույթով հաշիվների մնացորդների դիմաց տոկոսագումարը ՀՀ դրամով ստանալու հաճախորդի ցանկության դեպքում տոկոսագումարի փոխարկումը ՀՀ դրամի կատարվում է վճարման օրվա դրությամբ արտարժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

3) Բանկային հաշիվ/ներ/ի ակտիվացումը կիրականացվի համապատասխանաբար Բանկի կողմից բոլոր անհրաժեշտ գործողությունների կատարումից հետո, որոնք պահանջվում են ըստ Ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական և ներքին իրավական ակտերի կարգավորումների, և միայն այն դեպքում, երբ առկա չեն լինի հաշվի բացումն արգելող հիմքեր:

Բանկի և/կամ ՀՀ նկատմամբ պարտավորությունների բացակայության դեպքում Ձեր հաշիվը/հաշիվները կփակվի/կփակվեն առավելագույնը Հայտի ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը:

4) Բանկային հաշիվները բացվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրալիական դոլարով, ՄԱԷ դիրհամով, անկանխիկ ոսկով /999,9 հարգի/:

	Միջնորդավճար
1. Փոխանցումներ ՀՀ դրամով	
1.1. Ներբանկային	անվճար
1.2. ՀՀ բանկեր ¹	անվճար
1.2.1. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում	անվճար

¹ Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թողթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14.00-ից մինչև 15.15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարարականի համար:

1.2.2. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում ²	200 ՀՀ դրամ Ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հանձնարարականի համար
1.2.3. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	100 ՀՀ դրամ
1.3. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
1.4. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից	200 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
2. Փոխանցումներ արտարժույթով ³	
2.1. Ներբանկային	անվճար
2.2. ՌԴ ռուբլով	
2.2.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	3,000 ՀՀ դրամ
2.2.2. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	0.1 %, նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ
2.3. ԱՄՆ դոլարով, եվրոյով	
2.3.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
2.3.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	

² 1.2.2, 1.4 և 2.7 կետերը ուժի մեջ է 01.03.2019թ-ից:

³ Այն դեպքում, երբ փոխանցվող գումարը կազմում է 3 մլն և ավել ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ, փոխանցումները կատարվում են միայն 2.2, 2.3.2, 2.4.2 տարբերակներով՝ 1,000,000 ՀՀ դրամ միջնորդավճարով:

Այլ բանկ/եր/ում առկա վարկային պարտավորությունները Բանկ տեղափոխելու շրջանակում ավտոմատ եղանակով կատարվող արտարժույթով փոխանցումները Բանկի կողմից իրականացվում են անվճար: Սիրիական, կուբայական բանկեր և դրանց մասնաճյուղեր հասցեագրվող փոխանցումները կատարվում են ծախսերի 2.3.1 և 2.4.1 կետերում նշված տարբերակներով:

<p>2.3.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում</p>	<p>0.15%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ</p>
<p>2.3.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում</p>	<p>0.1%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ</p>
<p>2.3.3. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը</p>	<p>2.3.2 կետով սահմանված միջնորդավճար + 10,000 ՀՀ դրամ</p>
<p>2.4. Բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով</p>	
<p>2.4.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից</p>	<p>0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ</p>
<p>2.4.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը հետագայում փոխհատուցվում են հաճախորդին կողմից⁴</p>	
<p>2.4.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում</p>	<p>0.15%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ</p>
<p>2.4.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում</p>	<p>0.1%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ</p>
<p>2.5. Բանկում չգնանշվող արժույթներով գումարի փոխանցում (Փոխանցումը կատարվում է ԱՄՆ դոլարով, իսկ ստացողի հաշվին մուտքագրվում է հաճախորդի նախընտրած արտարժույթով:)</p>	<p>0.2%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ</p>

⁴ Ամերիաբանկի միջնորդ բանկերի կողմից ներկայացված ծախսերը ենթակա են փոխհատուցման հաճախորդի հաշվից:

<p>2.6. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում աշխատակցի կողմից</p>	<p>1,000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար</p>
<p>2.7. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում աշխատակցի կողմից</p>	<p>500 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար</p>

5) Հաճախորդի որևէ հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի գործող քարտին կից քարտային հաշիվ միայն, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտին կից քարտային հաշվի դեպքում միջնորդավճարը գանձվում է: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում հաճախորդի բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության և մնացորդների զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվները փակվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

6) Հաշվի նվազագույն մնացորդի մեծությունը՝ նվազագույն մնացորդ սահմանված չէ:

7) Հաճախորդի համար Բանկում սահմանված կարգով հաստատվում են Հաճախորդի հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրության (ստորագրությունների), կնիքի (առկայության դեպքում) նմուշ(ներ)ը, ինչպես նաև այդ ներկայացուցիչների շրջանակը սահմանող հրահանգ-հանձնարարական: Բանկը պահանջում է հրահանգ-հանձնարարականում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու օրինական հիմքը: Հրահանգ-հանձնարարականը, ստորագրության և կնիքի նմուշները հաստատվում են անժամկետ և գործում են մինչև Հաճախորդի կողմից վերացումը, եթե այլ ժամկետ սահմանված չէ հրահանգ-հանձնարարականում և (կամ) նմուշները հաստատող փաստաթղթերում: Հրահանգ-հանձնարարականում նշված ներկայացուցիչների զբաղեցրած պաշտոնների փոփոխությունը ինքնաբերաբար չի հանգեցնում այդ անձանց իրավասությունների փոփոխության: Ընդ որում, հեռահար եղանակով բացված Հաճախորդի ստորագրության նմուշը հաստատվում է առաջին այցով Բանկ: Կանխիկ միջոցների տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից գումարը ստանալու նախորդ աշխատանքային օրը ներկայացված հայտի հիման վրա, եթե գումարը գերազանցում է 30 մլն ՀՀ դրամը, 10,000 ԱՄՆ դոլարը և 30,000 եվրոն և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթը՝ մյուս արտարժույթների համար՝ գլխամասային գրասենյակում: Երևան քաղաքի Բանկի տարածքային ստորաբաժանումների համար սահմանվում է հետևյալ սահմանաչափը՝ 20 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար և 15,000 եվրո, իսկ Երևան քաղաքից դուրս Բանկի տարածքային ստորաբաժանումներում՝ 10 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար և 10,000 եվրո: Երևան քաղաքից դուրս մասնաճյուղերի դեպքում նշված սահմանաչափը գերազանցող

կանխիկ տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից հայտը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է բոլոր հաշիվները և հաճախորդի մնացորդը փոքր քան սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարը, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

8) Սպառողի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքի (հարցման) տրամադրման սակագները,

Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում (ներառյալ շահառուի համապատասխան հաշիվը փակված լինելու դեպքում) վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակից բանկի կողմից	
ՀՀ դրամ	անվճար
ՌԴ ռուբլի	25,000 ՀՀ դրամ
Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում	10,000 ՀՀ դրամ
Արտարժույթ	25,000 ՀՀ դրամ

9) Բանկի և/կամ ՀՀ նկատմամբ պարտավորությունների բացակայության դեպքում Ձեր հաշիվը/հաշիվները կփակվի/կփակվեն առավելագույնը Հայտի ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը: Ընդ որում, հաշիվը փակելու և հաշվին միջոցների առկայության դեպքում Դուք հնարավորություն ունեք առավելագույնը 7 օրվա ընթացքում այդ միջոցները փոխանցել այլ բանկային հաշվի կամ կանխիկացնել:

Հաճախորդի որևէ հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի գործող քարտին կից քարտային հաշիվ միայն, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտին կից քարտային հաշվի դեպքում միջնորդավճարը գանձվում է: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

10)

Հայտարարություն. հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման:

Հայտարարություն. հաշվետիրոջ դրամական միջոցների վրա թույլատրվում բռնագանձում տարածել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանի վճռի հիմքով՝ ԴԱՀԿ ծառայության որոշման համաձայն: Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու Բանկի պարտավորության մասին Հաճախորդին 3 (երեք) բանկային օրվա ընթացքում տեղեկացնելու համար (գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով):

11) Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեց միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեց միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեց և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով)

12) ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշիվների քաղվածքների ստացման նախընտրելի եղանակներն են:

- Հաճախորդի ինտերնետ-բանկ էջում տեղեկատվության հասանելիություն

- Բանկի տարածքում առձեռն
- Էլ. փոստ (նշված Էլ.փոստի հասցեով)
- Առաքում (նշված հասցեով)

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

Բանկի կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»):

Օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների (այդ թվում՝ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող միավորումների, միջազգային կազմակերպությունների), հաշիվները կարող են բացվել բացառապես Կորպորատիվ և Ներդրումային բանկինգ դեպարտամենտի հաճախորդների սպասարկման ծառայության կողմից: